



ԵԿԵՂԵՑԻ

Հարցազրոյց - Հանդիպում՝ Քարլա Խիժոյանին հետ

Վատիկանի մէջ կայացած «Կանայք միջ կրօնական հանդիպման մշակոյթի կառուցողներ» Համագումարին մասնակցող Քարլա Խիժոյան այցելեց Ռատիօ Վատիկան

Վատիկան նիւզ - Հայկական Բաժին

25 – 27 Յունուար 2023ին Վատիկանի մէջ կայացաւ՝ «Կանայք միջ կրօնական հանդիպման մշակոյթի կառուցողներ» Համագումար, որուն իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Քարլա Խիժոյան՝ Եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդի Մերձաւոր Արևելքի մէջ խաղաղութեան կառուցման ծրագրի ղեկավարը:

Քարլա Խիժոյան այս օրերուն այցելեց Ռատիօ Վատիկանը փոխանցելով իր այս փորձառութեան մասին տեղեկութիւններ:

Վերոնշեալ համագումարին մասնակցողները առիթը ունեցան նաեւ հանդիպում ունենալու Ֆրանչիսկոս Պապին հետ:

Քարլա Խիժոյան՝ ծնած է Լիբանան:

Ան Մարդասիրական և ընկերային գիտություններու Մասթըրը աւարտած է Պէյրութի Սուրբ Յովսէփ համալսարանին մէջ: Ժընևի համալսարանին մէջ հետեւած եւ ձեռք բերած՝ Կրօններու և ընդհանուր կառավարման յառաջադէմ ուսումնասիրութիւններու վկայագիրը:

Ան եղած է Մերձաւոր Արևելքի տարածաշրջանային համամիութենական կոմիտէի նախկին անդամ եւ Լիբանանի Կարմիր Խաչի փրկարար կամաւոր:

Այժմ կը ծառայէ՝ որպէս Եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդի Մերձաւոր Արևելքի մէջ խաղաղութեան կառուցման ծրագրի ղեկավար՝ յատուկ ուշադրութիւն դարձնելով Իրաքին և Պաղեստին/Իսրայէլին:

Հանդիպման ընթացքին Քարլա Խիժոյեան պատմեց հանդիպումի նպատակի մասին, որուն մասնակցեցան 21 երկիրներէ 12 կրօններու պատկան կանայք, անդրադարձաւ ապա Քահանայապետի հետ հանդիպումի մասին, որուն ընթացքին Ան շեշտած է կիներուն կարելոր դերակատարութիւնը:

Տիկին Խիժոյեան անդրադարձ կատարեց Լիբանանի իրավիճակի մասին, Միջին Արևելքի քրիստոնեաներու մասին ու Կրօններու միջեւ երկխօսութեան մասին:

Շնորհակալութիւն յօդուածը ընթերցելուն համար: Եթէ կը փափաքիս թարմ լուրեր ստանալ կը հրաւիրենք բաժանորդագրուիլ մեր լրաթերթին՝ [սեղմելով այստեղ](#)
